ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍԱՀԱԿՅԱՆ ՆԱՆԵ ԳԱՌՆԻԿԻ

ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԺԲ.00.03 - «Մասնավոր իրավունք՝ քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2019

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

СААКЯН НАНЭ ГАРНИКОВНА

ПРАВОВОЕ РЕГУЛИРОВАНИЕ ГОСУДАРСТВЕННЫХ ЗАКУПОК В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.03 - “Частное право - гражданское, торговое (коммерческое); международное частное, семейное, трудовое право, право социального обеспечения”

ЕРЕВАН-2019

Ատենախոսության թեման հաստատվել է
Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ Իրավ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Տ. Կ. Բարսեղյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Իրավ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Վ. Դ. Ավետիսյան**

իրավ. գիտությունների թեկնածու, ասիստենտ **Ս. Տ. Ֆարմանյան**

Առաջատար կազմակերպություն՝ **Հայ-ռուսական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2020 թվականի փետրվարի 18-ին, ժամը 14^{30}-ին ՀՀ ԲՈԿ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք.Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2019 թվականի դեկտեմբերի 27-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական
քարտուղար՝ իրավ. գիտ. թեկ., դոցենտ **Տ. Հ. Սուջյան**

Тема диссертации утверждена в
Ереванском государственном университете

Научный руководитель: доктор юрид. наук, профессор **Т. К. Барсегян**

Официальные оппоненты: доктор юрид. наук, профессор **В. Д. Аветисян**

кандидат юрид. наук, ассистент **С. Т. Фарманян**

Ведущая организация: **Российско-Армянский университет**

Защита диссертации состоится 18-ого февраля 2020 г. в 14^{30} часов на заседании Специализированного совета ВАК 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, г.Ереван, ул.Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки Ереванского государственного университета.

Автореферат разослан 27-ого декабря 2019 года.

Ученый секретарь специализированного
совета: кандидат юридических наук, двцент **Т. О. Суджян**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Ցանկացած իրավական, ժողովրդավարական պետություն իր գործառույթներն իրականացնում է հանրային շահերի բավարարման նպատակով: Հանրային շահերի բավարարումը, ի թիվս այլ միջոցների, ապահովվում է նաև պետական գնումների միջոցով:

Ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ պետական գնումներն ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում միշտ գտնվում են ուշադրության կենտրոնում, ինչը, մասնավորապես, պայմանավորված է այն հանգամանքով, որ պետական գնումներն իրականացվում են պետական բյուջեի միջոցների, հետևաբար նաև՝ հարկատուների հաշվին: Բացի այդ՝ պետությունում կոռուպցիայի աստիճանը որոշելու համար տարբեր հետազոտությունների շրջանակներում կարևորվում է նաև պետական գնումների համակարգի զարգացվածությունը, պրակտիկայի՝ օրենսդրության կարգավորումներին համապատասխանելը, ազատ մրցակցությունը, հաշվետվողականությունն ու թափանցիկությունն այս ոլորտում:

Թեմայի արդիականության մասին է վկայում նաև այն, որ մի շարք պետական մարմիններ իրենց գործունեության ծրագրերում, հաշվետվություններում կարևորում են պետական գնումների ոլորտի խնդիրների լուծումը: Օրինակ՝ ՀՀ կառավարությունն իր գործունեության ծրագրերով անդրադարձ է կատարում գնումների ոլորտում առկա խնդիրներին՝ առաջարկելով լուծման տարբեր մեխանիզմներ: ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը նույնպես իր տարեկան գործունեության ծրագրերում հատուկ անդրադառնում է պետական գնումների համակարգին: Հատկանշական է, որ ոլորտի կարևորությունն ընդգծում են ոչ միայն այնպիսի պետական մարմիններ, որոնց գործառույթների մեջ է մտնում պետական գնումների ոլորտի վերահսկողությունը, այլ նաև այլ պետական մարմիններ, որոնք իրենց կողմից մշակված հայեցակարգերում կամ ծրագրերում հատուկ տեղ են հատկացնում նաև պետական գնումներին:

Բացի այդ՝ ոլորտում առկա խնդիրները պարբերաբար բարձրաձայնվում են լրագրողների, հասարակական կազմակերպությունների կողմից, ինչը նշանակում է, որ թեման արդիական է նաև հասարակության տարբեր անդամների համար:

Այսպիսով՝ Հայաստանի Հանրապետությունում պետական գնումների ոլորտը կարևոր միջոց է առանձին ոլորտների արդյունավետությունը և տարբեր ռիսկերը գնահատելու համար:

Թեմայի արդիականությունը պայմանավորվում է նաև գնումների ոլորտի մի շարք միջազգային իրավական ակտերի իմպլեմենտացիայի անհրաժեշտությամբ: Այսպես, Հայաստանի Հանրապետությունը, որպես Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամ պետություն, վավերացրել է «Պետական գնումների մասին» համաձայնագիրը և «Պետական գնումների մասին» վերանայված համաձայնագիրը՝ ստանձնելով մի շարք պարտականություններ գնումների ոլորտի կատարելագործման ուղղությամբ: Հայաստանի Հանրապետությունը նաև Միավորված ազգերի կազմակերպության անդամ է, իսկ Միավորված ազգերի կազմակերպության Միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովի (United Nations Commission on International Trade Law, UNCITRAL) կողմից 2014 թվականին մշակվել է «Պետական գնումների մասին» մոդելային օրենքը՝ որպես ուղենշային փաստաթուղթ անդամ պետությունների համար: Հայաստանի Հանրապետությունը նաև անդամակցում է Եվրասիական տնտեսական միությանը, որի «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագիրը հատուկ բաժին է նախատեսում պետական (մունիցիպալ) գնումների վերաբերյալ: Հետևաբար, կարող ենք արձանագրել, որ Հայաստանի Հանրապետությունը նաև միջազգային կարգավորումների հաշվառմամբ է լուծում պետական գնումների ոլորտի խնդիրները՝ նկատի ունենալով, մասնավորապես, այն հանգամանքը, որ պետական գնումների ոլորտի զարգացվածությունը փաստում է պետության տնտեսության զարգացվածության մակարդակի մասին՝ խթան հանդիսանալով նաև օտարերկրյա ներդրումների համար:

Ատենախոսության թեմայի արդիական լինելու մասին են վկայում նաև բազմաթիվ օրենսդրական և պրակտիկ խնդիրները, որոնց լուծումը համարժեք գիտական հետազոտություն է պահանջում: Այսպես, Հայաստանի Հանրապետությունում արդեն իսկ ընդունվել են գնումների ոլորտը համալիր կարգավորող թվով չորս օրենքներ, որոնցով փորձ է արվել հնարավորինս մանրամասն կարգավորել պետական գնումների ոլորտը, ի կատարումն նշված օրենքների՝ ընդունվել են բազմաթիվ ենթաօրենսդրական ակտեր: Այդուհանդերձ, գործող պրակտիկան՝ մասնավորապես հարյուրավոր վեճերը (այդ թվում՝ դատական), որոնք ծագում են նաև իրավական նորմերի տարաբնույթ մեկնաբանության,

օրենսդրական թերի կարգավորումների կամ օրենսդրական բացերի արդյունքում, վկայում են այն մասին, որ մի շարք միջազգային փաստաթղթերի վավերացումը կամ այս ոլորտի բազմաթիվ ներպետական իրավական ակտերի ընդունումը չեն ապահովել ոլորտում առկա բազմաթիվ խնդիրների լիարժեք լուծումը:

Մասնավորապես, առանձին գնման ընթացակարգերի կիրառման պայմանները լիարժեքորեն չեն արտահայտում տվյալ ընթացակարգի էությունը (օրինակ՝ գնանշման հարցման դեպքում): Կամ մրցակցության սահմանափակումներն օրենսդրական կարգավորումներով նվազագույնի չեն հասցված, ինչը հղի է կոռուպցիոն ռիսկերով: Կարևոր հանգամանք է նաև այն, որ գնումների ոլորտում բավարար չափով ճկունություն տրված չէ պատվիրատուներին՝ գնումների կազմակերպչական հարցերն առավել արդյունավետ լուծելու համար:

Բացի այդ՝ պրակտիկայում խնդրահարույց հարցեր են նաև գնումների ոլորտի հետ կապված դատական գործերի ընդդատության, գնման առարկայի բնութագրերի սահմանման, պայմանագրի գնի որոշման, նախապես հրապարակված էական պայմանների փոփոխության և այլ հարցերը: Նման խնդիրները, որոնք հաճախ ստանում են միմյանցից էականորեն տարբերվող լուծումներ, պայմանավորված են ոչ միայն իրավակիրառ մարմինների, այլ նաև օրենսդրի թերացումներով:

Հարկ է նշել, որ մինչ այժմ գիտական մակարդակով բացակայում է որևէ համապարփակ աշխատություն, որը կանդրադառնար այս ոլորտի խնդիրներին, ինչպես նաև կամփոփեր վերջին տարիների զարգացումները: Այսինքն՝ քննարկվող ինստիտուտը հայրենական իրավաբանական գրականության մեջ դեռևս համակողմանիորեն ուսումնասիրված չէ, և դրա վերաբերյալ համալիր գիտական աշխատությունները բացակայում են:

Վերոգրյալի հիման վրա կարելի է հետևության անել այն մասին, որ առանց գնումների հիմնախնդիրների վերաբերյալ համակարգային գիտական հետազոտության՝ անհնար է լուծում տալ օրենսդրական կառուցակարգերում առկա խնդիրներին, ինչպես նաև լիարժեք կերպով հաղթահարել այս բնագավառի իրավակիրառ պրակտիկայում հաճախակի ծագող խնդրահարույց իրավիճակները, որպիսի հանգամանքով էլ հիմնավորվում է սույն թեմայի արդիականությունը:

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը և տեսական հիմքերը: Հայրենական իրավաբանական գրականության շրջանակում պետական գնումների ինստիտուտը, առկա տեսական և

գործնական հիմնախնդիրները համակողմանի վերլուծության չեն ենթարկվել: Խնդրո թեմային իրավագիտության մեջ որոշակի անդրադարձ է կատարվել Հ. Ա. Ենգոյանի կողմից «2016 թվականի դեկտեմբերի 16-ի «Գնումների մասին» ՀՀ օրենքով ամրագրված ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի իրավական կարգավիճակի որոշ հիմնախնդիրներ», «Գնումների ընթացակարգերի ընթացքում ծագած վեճերի լուծումը արտադատական կարգով», «Գնումների հետ կապված բողոքը քննող անձի կողմից իրականացվող ֆինանսական վերահսկողության որոշ հիմնախնդիրներ պետական գնումների ոլորտում» և «Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունը որպես ընկերությանը պետական գնումներին մասնակցելու իրավունքից զրկելու հիմք» գիտական հոդվածներում, որոնք, սակայն, սույն ոլորտի համապարփակ հետազոտություն չեն հանդիսանում: Պետական կարիքների համար ապրանքների մատակարարման պայմանագրին անդրադարձ է կատարված նաև պրոֆ. Տ. Կ. Բարսեղյանի և պրոֆ. Գ. Հ. Ղարախանյանի խմբագրությամբ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք» դասագրքում, որը դարձյալ սույն թեմայի համակողմանի հետազոտություն չի հանդիսանում:

Այլ մասնագիտությամբ հայ գիտնականներից գնումների ոլորտին անդրադարձել են տնտեսագետներ Գ. Գաբրիելյանը «ՀՀ պետական գնումների քաղաքականության հիմնախնդիրները» ատենախոսությամբ, Վ. Բ. Բոստանջյանը, Ա. Սիմոնյանը, Կ. Թոմիկյանը գիտական հոդվածներով:

Ի տարբերություն Հայաստանի Հանրապետության՝ արտասահմանյան իրավաբանական գրականության մեջ գնումների ոլորտը համակողմանի վերլուծել են տարբեր գիտնականներ, որոնցից հարկ ենք համարում առանձնացնել Լ. Վ. Անդրեևային, Կ. Վ. Կիչիկին, Սյու Արրոուսմիթին (Sue Arrowsmith), Քրիստոֆեր Բովիսին (Christopher Bovis):

Բացի վերոնշյալ հեղինակների աշխատություններից՝ հետազոտության տեսական հիմք են կազմել ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան տարբեր հեղինակների աշխատություններ, այդ թվում՝ Տ. Կ. Բարսեղյանի, Վ. Ե. Բելովի, Վ. Գ. Բլինովի, Ս. Ա. Բորդունովայի, Վ. Ս. Գլադկովի, Ե. Պ. Գուբինի, Ա. Ա. Դեմինի, Խ. Վ. Թայիի (Khi V. Thai), Գ. Ի. Մարտինենկոյի, Ն. Վ. Նեստերովիչի, Լ. Ի. Շևչենկոյի, Յ. Ա. Տիխոմիրովի և բազմաթիվ այլ հեղինակների աշխատություններ:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտն են պետական գնումների կազմակերպման ընթացքում առաջացող հարաբերությունները՝ մասնավոր իրավունքի համատեքստում: Հետազոտության առարկան են կազմում պետական պատվերի և պետական գնումների հատկանիշները, պետական կարիքների բավարարման նպատակով կնքվող պայմանագրի բնույթը, պայմանագրի էական պայմանները, գնումների գործընթացի մասնակցի կարգավիճակը, վերջինիս ներկայացվող պահանջները, գնման ընթացակարգերի առանձնահատկությունները, մրցույթների անցկացման կարգը և պայմանագրի կնքման առանձնահատկությունները:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակը Հայաստանի Հանրապետությունում պետական գնումների իրավական կարգավորման հիմնախնդիրների համալիր ուսումնասիրությունը և դրանց հետագա կատարելագործմանն ուղղված առաջարկներ ներկայացնելն է: Այդ նպատակի իրագործումը պահանջում է հետևյալ խնդիրների լուծումը՝

1) ուսումնասիրել և վեր հանել պետական պատվերի և պետական գնումների հատկանիշները,

2) վեր հանել պետական կարիքների բավարարման նպատակով կնքվող պայմանագրի բնույթը, վերջինիս հիմնական տարբերակիչ հատկանիշները քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից,

3) բացահայտել պետական գնումների գործընթացի մասնակիցների կարգավիճակը, նրանց շրջանակը, մասնակիցներին ներկայացվող պահանջները,

4) վեր հանել Հայաստանի Հանրապետությունում գործող գնման ընթացակարգերի առանձնահատկությունները, համեմատել այլ պետություններում գործող ընթացակարգերի հետ,

5) հետազոտել մրցույթների անցկացման առանձնահատկությունները,

6) բացահայտել պետական կարիքների բավարարման նպատակով պայմանագրի կնքման կարգը, այդ պայմանագրի էական պայմանները,

7) վեր հանել գնումների գործընթացում առաջացող հիմնական օրենսդրական և գործնական խնդիրները, ներկայացնել և հիմնավորել պետական գնումները կարգավորող օրենսդրության և դրա կիրառման կառուցակարգերի կատարելագործմանն ուղղված առաջարկները:

Հետազոտության իրավական և փորձառական հիմքերը: Հետազոտության իրավական հիմքն են կազմել ՀՀ Սահմանադրությունը,

գնումները կանոնակարգող միջազգային իրավական ակտերը՝ մասնավորապես «Պետական գնումների մասին» համաձայնագիրը և «Պետական գնումների մասին» վերանայված համաձայնագիրը, «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագիրը, ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, «Գնումների մասին» ՀՀ օրենքը, «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշումը և այլ իրավական ակտեր, ինչպես նաև ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներ: Հետազոտության փորձառական հիմք են կազմել Եվրոպական Միության արդարադատության դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի, առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատական ակտեր, ինչպես նաև գնման հայտարարություններ և հրավերներ, գնումների գործընթացի արդյունքում կնքվող պայմանագրեր:

Հետազոտության ընդհանուր մեթոդաբանությունը: Հետազոտության նպատակներին և խնդիրներին հասնելու համար կիրառվել են ինդուկցիայի, դեդուկցիայի, անալիզի, սինթեզի, իրավահամեմատական, վիճակագրական, համակարգակառուցվածքային, տրամաբանական վերլուծության, լեզվաբանական մեկնաբանման և այլ մեթոդներ:

Հետազոտության գիտական նորույթը: Ատենախոսության գիտական նորույթն այն է, որ հայրենական իրավագիտության մեջ առաջին անգամ համապարփակ ուսումնասիրության և վերլուծության են ենթարկվում պետական գնումների գործընթացի հետ կապված տեսական և գործնական հիմնախնդիրները: Տեսության մեջ արտահայտված կարծիքների, Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրության և պրակտիկայի, միջազգային իրավական ակտերի, արտասահմանյան երկրների փորձի համակարգային վերլուծության հիման վրա ուսումնասիրվել է պետական գնումների ոլորտի վերաբերյալ հարցերի լայն շրջանակ՝ հետազոտելով պետական պատվերի, պետական գնման հասկացությունների, պետական կարիքների բավարարման նպատակով կնքվող պայմանագրի էության և կնքման առանձնահատկությունների, գնումների գործընթացի մասնակցի կարգավիճակի, գնման ընթացակարգերի հետ կապված, ինչպես նաև գնումների ոլորտի այլ հիմնախնդիրներ:

Ատենախոսության գիտական նորույթն արտացոլված է պաշտպանության ներկայացվող դրույթներում և ատենախոսության

եզրակացության մեջ հեղինակի կողմից կատարված տեսական ընդհանրացումներում և գիտագործնական բնույթի առաջարկություններում, ինչպես նաև հեղինակի կողմից հրապարակված հոդվածներում:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

1. ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը պետական կարիքների համար ապրանքների մատակարարման պայմանագրի վերաբերյալ կարգավորումներով նախատեսում է երկու տեսակի պայմանագրի կնքման հնարավորություն՝ պետական կարիքների համար ապրանքների մատակարարման պետական պայմանագիր (պետական պայմանագիր) և պետական կարիքների համար ապրանքների մատակարարման պետական պայմանագրին համապատասխան կնքված պետական կարիքների համար ապրանքների մատակարարման պայմանագիր: Մինչդեռ «Գնումների մասին» ՀՀ օրենքը նախատեսում է միայն մեկ պայմանագրի կնքման հնարավորություն: Ավելին, կատարված գործնական հետազոտությունների արդյունքում պարզ է դարձել, որ պրակտիկայում կնքվում է բացառապես մեկ պայմանագիր, որը ոչ միայն խնդիրներ չի առաջացնում, այլև ավելի է պարզեցնում գնման գործընթացը:

Վերոգրալից հետևում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված կարգավորումն ավելորդ ծանրաբեռնում է օրենսդրությունը, հակասություն ստեղծում ճյուղային օրենսդրության հետ: Դրանից ելնելով էլ աշխատանքում առաջարկվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքում կատարել փոփոխություն՝ նախատեսելով միայն մեկ՝ պետական կարիքների բավարարման համար պայմանագրի կնքման հնարավորություն:

2. Պետական գնումներին մասնակցությունն էական նշանակություն ունի փոքր և միջին գործարարների համար, որպիսի հանգամանքը բազմիցս կարևորվել է պետության կողմից: Այդուհանդերձ, «Գնումների մասին» ՀՀ օրենքը որևէ արտոնություն չի նախատեսում նշված անձանց համար:

Կատարած հետազոտությունների հիման վրա աշխատանքում առաջարկվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանել արտոնություն փոքր և միջին գործարարների համար, մասնավորապես, հետևյալ եղանակներով՝ հավասար պայմաններում առավելություն տալ վերոնշյալ անձանց, ինչպես նաև օրենքով սահմանված կոնկրետ խմբաքանակի շրջանակներում գնում անցկացնել միայն նշված անձանց շրջանակներում՝

պայմանով, որ վերջիններիս կողմից տրամադրվող ապրանքները, աշխատանքները, ծառայությունները կամ այլ ակտիվները (արժեքները) համապատասխանեն սահմանված չափանիշներին:

3. Գործող օրենսդրությունը չի բացահայտում գնանշման հարցման ընթացակարգի առանձնահատկությունը, քանի որ պարզապես սահմանում է, որ գնումը կարող է կատարվել գնանշման հարցման ձևով, եթե գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորի (մեկ միլիոն ՀՀ դրամ) յոթանասունապատիկը, և գնման առարկան ներառված չէ էլեկտրոնային աճուրդի միջոցով կամ փակ պարբերական մրցույթով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակներից որևէ մեկում: Ավելին, գործնական հետազոտությունների հիման վրա պարզվել է, որ սույն գնման ընթացակարգը կիրառվում է ինչպես լայն սպառման, այնպես էլ այդպիսիք չհանդիսացող գնման առարկաներ ձեռք բերելիս:

Աշխատանքում առաջարկվել է որպես գնանշման հարցման ընթացակարգի կիրառման պայման նախատեսել, որ գնանշման հարցման կարող է կիրառվել միայն արդեն իսկ ձևավորված, գործող շուկա ունեցող գնման առարկաների նկատմամբ, երբ գնման գինը չի գերազանցում օրենսդրությամբ սահմանված չափը: Ընդ որում, նկատի ունենալով գնանշման հարցման ընթացակարգի սահմանափակ մրցակցային բնույթ կրելը՝ աշխատանքում նաև առաջարկվել է, որ նշված ընթացակարգի կիրառման դեպքերում մանրամասն հիմնավորվի ընթացակարգի կիրառման անհրաժեշտությունը՝ այն հրապարակելով հայտարարության կամ հրավերի տեքստում կամ առանձին որոշման տեսքով:

4. Նկատի ունենալով, որ գնման ընթացակարգերից ոչ մրցակցային ընթացակարգ համարվող մեկ անձից գնումն ամենալայն հնարավորությունն է պարունակում չարաշահումների կատարման համար և հղի է մրցակցությունը սահմանափակելու լուրջ վտանգներով, աշխատանքում առաջարկվել է մեկ անձից գնում կատարելու՝ «եթե գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորը» հիմքը փոխարինել «եթե անհնար է գնման այլ ընթացակարգի կիրառումը» հիմքով: Բացի այդ՝ գնանշման հարցման ընթացակարգի նմանությամբ, հաշվի առնելով մեկ անձից գնում կատարելու ոչ մրցակցային բնույթը, աշխատանքում նաև առաջարկվել է, որ նշված ընթացակարգի կիրառման դեպքերում մանրամասն հիմնավորվի ընթացակարգի կիրառման անհրաժեշտությունը՝ այն հրապարակելով հայտարարության կամ հրավերի տեքստում կամ առանձին որոշման տեսքով:

5. Գործող օրենսդրությամբ յուրաքանչյուր պատվիրատու գնման ընթացակարգը կազմակերպում է ինքնուրույն (բացառությամբ կենտրոնացված գնում կատարելու սահմանափակ դեպքերի): Կատարված ուսումնասիրությունների հիման վրա աշխատանքում առաջարկվել է Հայաստանի Հանրապետությունում ներդնել համատեղ գնման կառուցակարգ, որը հնարավորություն կտա մեկից ավել պատվիրատուների համատեղ կազմակերպել գնման ընթացակարգը, կենտրոնացնել միջոցները, ռեսուրսները՝ կազմակերպչական հարցերը կատարելու համար, այնուհետև յուրաքանչյուր պատվիրատու հաղթողի հետ կկնքի առանձին պայմանագիր՝ ըստ իր ունեցած պահանջի: Նման կառուցակարգի ներդնումը հնարավորություն կտա խնայել բյուջեի միջոցները:

6. Գնումների վերաբերյալ գործող օրենսդրությունը գնման գործընթացում հաղթողին որոշելու հիմնական չափանիշ, որպես կանոն, համարում է միայն առաջարկվող գինը: Գնման հրավերների, պայմանագրերի և դատական գործերի ուսումնասիրությունների հիման վրա առաջարկվել է հաղթող մասնակցին որոշելու չափանիշ սահմանել ոչ միայն առաջարկվող գինը, այլ առաջարկվող գնի և գնման առարկայի որակական հատկանիշների համակցությունը: Նման կարգավորումը հնարավորություն կտա պետական կարիքները բավարարել ոչ թե միայն ամենացածր գնով գնման առարկաներով, այլ ամենաարդյունավետ գին և որակ ունեցող գնման առարկաներով:

7. Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ գնման գործընթացի մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ընդ որում, մասնակցից չի պահանջվում ներկայացնել գնային առաջարկի՝ մասնավորապես ինքնարժեքի հիմնավորումը: Արդյունքում պրակտիկայում առաջանում է այնպիսի խնդիր, երբ գնման գործընթացին մասնակցող անձն առաջարկում է անգամ գնման առարկայի ինքնարժեքից ցածր գին՝ այլ տնտեսվարող սուբյեկտների մասնակցությունը գնման գործընթացում բացառելու և վերջիններիս շուկայից դուրս մղելու նպատակով:

Տարբեր պետությունների փորձի ուսումնասիրության արդյունքում առաջարկվել է Հայաստանի Հանրապետությունում ներդնել պայմանագրի «նվազագույն գնի» կառուցակարգը՝ լուծելու համար Հայաստանի Հանրապետության օրենսդրական կարգավորումներով պայմանավորված

վերոգրյալ խնդիրը: «Նվազագույն գնի» կառուցակարգի առկայության պայմաններում պայմանագրի նվազագույն գինը, լինելով այն նվազագույն սահմանը, որից ավելի ցածր գին մասնակիցներն իրավունք չունեն առաջարկել, կարող է լինել պետական գնումների արդյունավետությունը բարձրացնող գործոն, այսպես կոչված, «մրցակցային ռեյդերության» դեմ պայքարի միջոց՝ նկատի ունենալով, որ մասնակցից կպահանջվի ներկայացնել առաջարկվող գնի՝ մասնավորապես ինքնարժեքի հիմնավորման վերաբերյալ ապացույցներ:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը:

Հետազոտության տեսական նշանակությունն այն է, որ պետական գնումների ոլորտն ուսումնասիրվել է համալիր կերպով, վեր են հանվել ոլորտում առկա մի շարք տեսական, օրենսդրական և գործնական խնդիրներ, որով պայմանավորված՝ սույն ատենախոսության եզրահանգումները, ներկայացված գիտական և գործնական առաջարկները կարևոր նշանակություն կարող են ունենալ սույն ոլորտի հետագա ուսումնասիրության, այդ թվում՝ պետական գնումների առանձին հիմնախնդիրների վերաբերյալ գիտական ուսումնասիրությունների և գիտագործնական հարցերի մշակման համար:

Հետազոտության գործնական նշանակությունն այն է, որ սույն հետազոտությունը կարող է կիրառվել ինչպես իրավաստեղծ, այնպես էլ իրավակիրառ գործունեության ընթացքում՝ մասնավորապես հիմք հանդիսանալով ինչպես օրենսդրական փոփոխությունների, այնպես էլ պրակտիկ խնդիրների լուծման համար: Բացի այդ՝ սույն ատենախոսության արդյունքները կարող են օգտագործվել ուսումնական դասընթացների՝ մասնավորապես «Գործարարական իրավունք» դասընթացի շրջանակներում:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը: Ատենախոսությունը պատրաստվել է Երևանի պետական համալսարանի քաղաքացիական իրավունքի ամբիոնում: Հետազոտության արդյունքներն ամփոփված են հեղինակի կողմից հրապարակված գիտական հոդվածներում, որոնք հրապարակվել են գիտական ամսագրերում և ժողովածուներում: Ատենախոսության մի շարք դրույթներ հեղինակի կողմից ներկայացվել են գիտական զեկույցների շրջանակներում:

Աշխատանքի կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, դրանցում ներառված յոթ պարագրաֆներից, եզրակացությունից և օգտագործված իրավական ակտերի, գրականության և պրակտիկայի նյութերի ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության մշակվածության աստիճանը և տեսական հիմքերը, օբյեկտը, առարկան, նպատակը և խնդիրները, իրավական, փորձառական հիմքերը, ընդհանուր մեթոդաբանությունը, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները, հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության արդյունքների փորձարկումը և դրա կառուցվածքը:

Առաջին գլուխը՝ «Պետական գնումների գործընթացի ընդհանուր բնութագիրը» վերտառությամբ, բաղկացած է երկու պարագրաֆներից:

Առաջին գլխի առաջին պարագրաֆում՝ ««Պետական պատվեր» և «պետական գնում» հասկացությունները» վերտառությամբ, ուսումնասիրվել է պետական կարիքի էությունը, ներկայացվել են պետական պատվերը և պետական գնումները բնորոշող հատկանիշները, տրվել են նոր սահմանումներ:

Առաջին գլխի երկրորդ՝ «Պետական կարիքների բավարարման նպատակով կնքվող պայմանագրի հիմնական բնութագիրը» վերնագրով պարագրաֆում ներկայացվել են նշված պայմանագրին բնորոշ առանձնահատկությունները, առաջարկվել է նոր հասկացություն:

Երկրորդ գլուխը՝ «Պետական գնումների գործընթացի մասնակիցը» վերտառությամբ, բաղկացած է երկու պարագրաֆներից:

Երկրորդ գլխի առաջին՝ «Պետական գնումների գործընթացի մասնակցի ընդհանուր բնութագիրը» վերտառությամբ պարագրաֆում ներկայացվել է մասնակցի կարգավիճակի հիմնական բնութագիրը, անդրադարձ է կատարվել մի շարք սուբյեկտների կողմից գնումների գործընթացին մասնակցելու հնարավորությանը:

Երկրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Պետական գնումների գործընթացի մասնակցին ներկայացվող պահանջները» վերտառությամբ, անդրադարձ է կատարվել գնումներին մասնակցելու իրավունքին և գնումներին մասնակցելու համար անհրաժեշտ որակավորման չափանիշներին:

Երրորդ գլուխը՝ «Պետական գնումների անցկացման կարգը» վերտառությամբ, պարունակում է երեք պարագրաֆ:

Երրորդ գլխի առաջին՝ «Պետական գնում կատարելու ընթացակարգերը» վերնագրով պարագրաֆում հետազոտված են Հայաստանի Հանրապետությունում գործող գնման ընթացակարգերի

հիմնական բնութագրերը և առկա թերությունները:

Երրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Մրցույթի անցկացման կարգը» վերտառությամբ, ներկայացված է ամենահաճախ կիրառվող գնման ընթացակարգի՝ մրցույթի անցկացման կարգը:

Երրորդ գլխի երրորդ՝ «Պայմանագրի կնքումը» վերտառությամբ պարագրաֆում ներկայացված են պետական կարիքների բավարարման նպատակով կնքվող պայմանագիրը կնքված համարելու համար անհրաժեշտ պայմանները՝ մասնավորապես պայմանագրի առարկան և գինը:

Ատենախոսության եզրակացությունում ներկայացվել են հետևյալ հիմնական առաջարկությունները և եզրահանգումները.

1. Հաշվի առնելով, որ «պետական պատվեր» եզրույթի բացահայտումը գնման գործընթացում ունի առանցքային նշանակություն, իսկ «Գնումների մասին» ՀՀ օրենքը չի սահմանում, թե որն է պետական պատվերը, առաջարկվել է պետական պատվերի հետևյալ բնորոշումը. պետական գնումների ոլորտում պետական պատվերը պետական կարիքների բավարարման նպատակով գնումների պլանավորման ընթացքում պետական պատվիրատուի կողմից մշակված և կոնկրետ ապրանքների, աշխատանքների, ծառայությունների կամ այլ ակտիվների (արժեքների) ստացման համար տրված հանձնարարական է:

2. Նկատի ունենալով, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքը «գնում» արտահայտությունն է օգտագործում ինչպես ապրանքների, այնպես էլ ծառայությունների և աշխատանքների ձեռքբերման համար, ինչն առաջացնում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքից «Գնումների մասին» ՀՀ օրենքի եզրութաբանական օտարացվածություն, առաջարկվել է «գնում» եզրույթի փոխարեն օգտագործել «պետական բյուջեի միջոցների հաշվին պետական կարիքների բավարարում» արտահայտությունը՝ բնորոշելով այն որպես ապրանքների, աշխատանքների, ծառայությունների կամ այլ ակտիվների (արժեքների) ստացմանն ուղղված և պետական պատվերի վրա հիմնված գործընթաց, որը ֆինանսավորվում է պետական բյուջեի միջոցների հաշվին:

3. Կատարված հետազոտությունների արդյունքում կատարվել է եզրահանգում այն մասին, որ պետական կարիքների բավարարման նպատակով կնքվող պայմանագիրը քաղաքացիաիրավական պայմանագրի տեսակ հանդիսացող գործարարական պայմանագիր է: Առաջարկվել է պետական կարիքների բավարարման նպատակով կնքվող պայմանագիրը բնորոշել որպես պետական կարիքների բավարարման

գործընթացում հաղթող մասնակցի հետ սահմանված ընթացակարգերի պահպանմամբ պետական պատվիրատուի կողմից պետության անունից կնքվող պայմանագիր:

4. Հիմնավոր համարելով օտարերկրյա անձանց համար ազգային ռեժիմ տրամադրելը՝ առաջարկվել է փոխադարձության սկզբունքի հաշվառմամբ գնումների գործընթացում օտարերկրյա անձանց մասնակցությունը սահմանափակել այն դեպքերում, երբ համապատասխան օտարերկրյա պետությունն արգելք է ստեղծել Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար՝ տվյալ պետության տարածքում գնման գործընթացներին մասնակցելու համար:

5. Ընդհանրացնելով գնումների մասին ՀՀ օրենսդրության կարգավորումները՝ ամփոփվել է, որ թեև գնումների գործընթացին առավելապես մասնակցում են գործարարական գործունեություն իրականացնող սուբյեկտներ, սակայն օրենսդիրն արդարացիորեն չի սահմանափակել գնումներին մասնակցելու իրավունք ունեցող անձանց շրջանակը, ինչը հնարավորություն է տալիս նաև ֆիզիկական անձանց և ոչ առևտրային կազմակերպություններին՝ մասնակցելու գնման գործընթացներին:

6. Կատարված հետազոտությունների հիման վրա քննադատվել է գործող օրենսդրությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվելու հիմքերից հակամրցակցային վարքագծի համար համապատասխան որոշում կայացված լինելու հիմքը բացառելը:

7. Պետական գնումների գործընթացում անբարեխիղճ մասնակցի նկատմամբ կիրառվող ներգործության միջոցների ճկունությունն ապահովելու նպատակով առաջարկվել է նշված միջոցների շրջանակն ընդլայնել՝ նախատեսելով նաև այլ միջոցներ (նախազգուշացում, տուգանք)՝ նախքան գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելը:

8. Գործնականում առկա խնդիրների՝ տեսության վրա հիմնված հետազոտությունների հիման վրա կատարվել է եզրահանգում այն մասին, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու հարցի կապակցությամբ ծագող հարաբերություններն իրենց բնույթով քաղաքացիաիրավական են, ոչ թե վարչական:

9. Հաշվի առնելով էլեկտրոնային ձևով գնումների անցկացման ժամանակ գործնականում ծագող խնդիրները՝ առաջարկվել է ներդնել

ընտրանքային ստուգման մեխանիզմ՝ պարբերաբար վերահսկողություն իրականացնելով գործընթացի նկատմամբ, իսկ մասնակցությունը խոչընդոտող դեպքերի հայտնաբերման դեպքում գնման ընթացակարգը ճանաչել անվավեր:

10. Պրակտիկայի ուսումնասիրության հիման վրա առաջարկվել է, որ մրցույթների համեմատ նվազ մրցակցային ընթացակարգերի՝ մասնավորապես մեկ անձից գնման կամ գնանշման հարցման ընթացակարգերի կիրառման դեպքերում մանրամասն հիմնավորվի տվյալ ընթացակարգի կիրառման անհրաժեշտությունը՝ այն հրապարակելով, օրինակ, հրավերի կամ հայտարարության տեքստում կամ առանձին որոշման տեսքով:

11. Տեսական տարբեր կարծիքների ամփոփման հիման վրա կատարվել է եզրահանգում այն մասին, որ գնման հայտարարությունը և հրավերն ըստ էության օֆերտա անելու հրավեր են, իսկ հայտը՝ օֆերտա, որի պայմանները հետագայում նույնությամբ պետք է արտացոլվեն կողմերի միջև ստորագրվող պայմանագրում:

12. Գնման առարկան սահմանելիս պետք է նվազագույնի հասցվեն այն դեպքերը, երբ գնման առարկան անհատականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված որևէ եղանակով՝ որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին հղում կամ պահանջ պարունակելով: Ամեն դեպքում, եթե պատվիրատուն գնման առարկան սահմանում է այդ եղանակով, ապա հենց պատվիրատուն էլ պետք է ապացուցի, որ այլ եղանակով հնարավոր չէր ապահովել գնման առարկայի միանշանակ ընկալում հնարավոր մասնակիցների համար:

13. Նկատի ունենալով, որ գնման առարկայի հետ կապված վեճերի զգալի մասը ծագում է գնման առարկան ոչ ճիշտ սահմանելու արդյունքում, լիազորված մարմին հանդիսացող ՀՀ ֆինանսների նախարարության դերը պետք է նշանակալից լինի նաև գնման առարկայի բնութագրերի մշակման հարցում: Դա կարող է դրսևորվել կա՛մ լիազորված մարմնի համապատասխան մասնագիտացում ունեցող աշխատակիցներ ներգրավելով և վերջիններիս միջոցով պետական պատվիրատուներին աջակցություն ցուցաբերելով, կա՛մ պետական պատվիրատուների համապատասխան աշխատակիցների մասնագիտացումն ապահովելով: Նշված խնդիրը կարող է լուծվել նաև համատեղ գնման կառուցակարգի ներդնման պայմաններում:

14. «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշման հավելված հանդիսացող «Գնումների գործընթացի կազմակերպման կարգով» նախատեսվել են սպառիչ դեպքեր, երբ պայմանագրի գինը կարող է փոփոխվել, սակայն որևէ հետևանք նախատեսված չէ խախտումների համար: Ուստի առաջարկվել է վարչական պատասխանատվություն նախատեսել պատվիրատուի համապատասխան պաշտոնատար անձի համար, այդ թվում՝ նաև պայմանագրի այլ էական պայմանների (մասնավորապես՝ պայմանագրի առարկայի)՝ օրենսդրությամբ չնախատեսված փոփոխության համար: Բացի այդ՝ առաջարկվել է պայմանագրի պայմանների նման փոփոխության դեպքում այդպիսի պայմանը համարել առոչինչ:

15. Նկատի ունենալով, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքը կարգավորում չի պարունակում գնման գնի որոշման վերաբերյալ, առաջարկվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքով մանրամասն նախատեսել ինչպես գնման գնի որոշման մեթոդները, այնպես էլ գնման գնի որոշման կարգը:

Ատենախոսության դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Նանե Սահակյան ««Գնում» և «Պետական պատվեր» հասկացությունները» // ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2015 թվականի նստաշրջանի նյութերի ժողովածու, Եր., ԵՊՀ հրատ., 2016, էջեր 283-296:

2. Նանե Սահակյան «Պետական (համայնքային) կարիքների համար կնքվող պայմանագրի իրավական բնույթը» // ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2016 թվականի նստաշրջանի նյութերի ժողովածու, Եր., ԵՊՀ հրատ., 2017, էջեր 296-313:

3. Նանե Սահակյան «Գնումների գործընթացին մասնակցող անձանց (մասնակիցների) ընդհանուր բնութագիրը», // Պետություն և իրավունք, Եր., 2017, N 1 (75), էջեր 30-37:

4. Նանե Սահակյան «Գնումների մասնակցող անձանց ներկայացվող պահանջները», // Դատական իշխանություն, Եր., 2017, N 4 (214), էջեր 46-53:

5. Նանե Սահակյան «Պետական գնման պայմանագրի առարկան՝ որպես պայմանագրի էական պայման», // Օրինականություն, Եր., 2017, N 101, էջեր 59-64:

6. Նանե Սահակյան «Պետական գնման պայմանագրի գինը՝ որպես պայմանագրի էական պայման», // Պետություն և իրավունք, Եր., 2017, N 2-3 (76-77), էջեր 97-104:

7. Նանե Սահակյան «Պետական գնում կատարելու ընթացակարգերը Հայաստանի Հանրապետությունում», // Պետություն և իրավունք, Եր., 2018, N 3-4 (81-82), էջեր 76-86:

8. Նանե Սահակյան «Պետական կարիքների բավարարման նպատակով կնքվող պայմանագրի հիմնական բնութագիրը», // Դատական իշխանություն, Եր., 2018, N 11-12 (233-234), էջեր 42-59:

9. Նանե Սահակյան «Մրցույթի՝ որպես գնման ընթացակարգի անցկացման կարգը», // Դատական իշխանություն, Եր., 2019, N 3-4 (237-238), էջեր 18-25:

10. Նանե Սահակյան ««Պետական պատվեր» և «պետական գնում» հասկացությունները, // Օրինականություն, Եր., 2019, N 111, էջեր 52-57:

СААКЯН НАНЭ ГАРНИКОВНА

ПРАВОВОЕ РЕГУЛИРОВАНИЕ ГОСУДАРСТВЕННЫХ ЗАКУПОК В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

РЕЗЮМЕ

Каждое правовое, демократическое государство осуществляет свои функции в целях удовлетворения общественных интересов. Удовлетворение общественных интересов, помимо других ресурсов, также обеспечивается за счет государственных закупок.

Актуальность темы диссертации обусловлена тем, что государственные закупки как во всем мире, так и в Республике Армения всегда находятся в центре внимания, что, в частности, обусловлено тем обстоятельством, что государственные закупки осуществляются за счет средств государственного бюджета, а следовательно, и за счет налогоплательщиков. Кроме того, для определения степени коррупции в государстве в рамках различных исследований важно также развитие системы государственных закупок, соответствие практики регуляциям законодательства, свободная конкуренция, подотчетность и прозрачность в этой сфере.

Об актуальности темы свидетельствует и то, что ряд государственных органов в своих программах и отчетах придают важность решению проблем сферы государственных закупок. Кроме того, существующие в сфере проблемы периодически озвучиваются журналистами, общественными организациями, что означает, что тема актуальна и для различных членов общества.

Актуальность темы обусловлена также необходимостью имплементации ряда международных правовых актов сферы закупок. Об актуальности темы диссертации свидетельствуют также многочисленные законодательные и практические проблемы, решение которых требует адекватного научного исследования.

Следует отметить, что до сих пор на научном уровне отсутствует какая-либо комплексная работа, которая коснулась бы проблем этой сферы, а также обобщила бы развития правовой сферы последних лет. Между тем, без системного научного исследования проблем закупок невозможно

решить проблемы, существующие в законодательных структурах, а также полноценно преодолеть часто возникающие проблемные ситуации в правоприменительной практике в этой области, в силу чего и обосновывается актуальность данной темы.

Научная новизна диссертации заключается в том, что впервые в отечественной юриспруденции подвержены комплексному исследованию и анализу теоретические и практические проблемы, связанные с процессом государственных закупок. На основании внутригосударственного законодательства и практики Республики Армения, международных правовых актов, опыта зарубежных стран, а также на основании мнений, выраженных в теории, был изучен широкий спектр вопросов в сфере государственных закупок, исследуя сущность и особенности заключения договора, заключаемого с целью удовлетворения государственных нужд, статус участника процесса закупок, процедуры закупки, а также другие проблемы сферы закупок.

Диссертация имеет как теоретическое, так и практическое значение.

Теоретическое значение исследования состоит в том, что сфера государственных закупок изучена комплексно, выявлен ряд теоретических, законодательных и практических проблем, связанных с этим, выводы данной диссертации, представленные научные и практические предложения могут иметь важное значение для дальнейшего изучения данной сферы, в том числе для научных исследований и разработки научно-практических вопросов по отдельным проблемам государственных закупок.

Практическое значение исследования заключается в том, что данное исследование может быть применено как в правотворческой, так и в правоприменительной деятельности, в частности, являясь основой как для законодательных изменений, так и для решения практических задач.

NANE GARNIK SAHAKYAN

LEGAL REGULATION OF PUBLIC PROCUREMENT IN THE REPUBLIC OF ARMENIA

SUMMARY

Every legal, democratic state performs its functions in the public interests. Among other resources public interest is also provided through public procurement.

The relevance of the topic of dissertation is due to the fact that public procurements are always in the focus of attention worldwide, as well as in the Republic of Armenia, which, in particular, is due to the fact that public procurements are carried out at the expense of the state budget and therefore taxpayers. In addition, in order to determine the level of corruption in the state, various surveys also emphasize the development of the public procurement system, the compliance of practice with legal regulations, free competition, accountability and transparency in this area.

The relevance of the topic is also evidenced by the fact that a number of public authorities highlight the importance of addressing public procurement issues in their programs of activity and reports. In addition, problems in the field are regularly raised by journalists and NGOs, which means that the topic is also relevant to different members of society.

The relevance of the topic is also conditioned by the need to implement a number of international legal acts in the field of procurement. The topic of dissertation is also evidenced by numerous legislative and practical issues that require adequate scientific research.

It's very important to state that at present there is no comprehensive scientific work addressing the issues in this field, as well as summarizing developments in the legal field in recent years. However, without systematic scientific research on procurement issues, it is impossible to solve the problems in the legislative framework, as well as to fully overcome the problematic situations that arise frequently in practice, which proves the relevance of this topic.

The scientific novelty of the dissertation is that for the first time in domestic jurisprudence the theoretical and practical issues related to the public procurement process are examined and analyzed.

On the basis of the opinions expressed in theory, the domestic legislation and the practice of the Republic of Armenia, international legal acts and the experience of foreign countries, a wide range of issues related to public procurement have been studied, examining the notion of state order, state procurement, essence and conclusion of a contract for the purpose of satisfying public needs, , public authorities, The status of contracting parties, procurement procedures and other issues related to public procurement sphere.

Dissertation has both theoretical and practical significance.

Theoretical significance of the research is that the public procurement field has been studied in a comprehensive manner, and the number of theoretical, legislative and practical issues in the field have been raised, whereby the conclusions of this dissertation, the scientific and practical recommendations presented can be of great importance for further study in this field, including for the development of scientific research and development of practical issues on specific public procurement issues.

The practical significance of the research is that it can be applied to both law-making and law-enforcement activities, in particular as a basis for both legislative changes and practical issues.